ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզ, Փամբակ համայնք, Քարաբերդի վարչական կենտրոն

15.08.2025թ.

ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի արևմտյան և արևելյան տեղամասերում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության նախատեսվող աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման գործընթացների իրականացման վերաբերյալ անցկացվող հանրային քննարկումների

2025 թվականի օգոստոսի 13-ին ժամը 11:00-ին ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Քարաբերդի ոսկու հանքավայրի արևմտյան և արևելյան հատվածների ստորև բերվող ծայրակետային կոորդինատներով սահմանափակված տեղամասերում՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության նախատեսվող աշխատանքների վերաբերյալ կազմակերպված հանրային լսում:

Մասնակցեցին՝

Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը, Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավար Յու. Շավելյանը, «Զով-Գուժ» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Հակոբյանը, նույն ընկերության ներկայացուցիչ Վիգեն Ավետիսյանը, Փամբակի համայնքապետարանի ներկայացուցիչները, համայնքի ավագանու անդամները, Քարաբերդի և հարակից բնակավայրերի բնակիչները, լրատվամիջոցների, հասարակական և բնապահպանական կազմակերպությունների ներկայացուցիչները, ազատ լրագրողները և բնապահպանները: (կից՝ մասնակիցների ցանկը, որը հանրային լսմանը ներկաներից շատերը ինչ-ինչ նկատառումներից ելնելով չստորագրեցին և տեսաձայնագրությունը):

Զեկուցումներ՝

Բացման խոսքով հանդես եկավ Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը.

- Հարգելի հյուրեր, բնակիչներ, լրագրողներ, «Զով-Գուժ» ընկերության ներկայացուցիչներ, ավագանու անդամներ, ողջունում եմ բոլորիդ, շնորհակալություն եմ հայտնում, որ ժամանակ եք տրամադրել հանրային լսմանը մասնակցելու համար: Առաջին անգամ չէ, որ Քարաբերդում հանրային լսում ենք կազմակերպում, բոլորիդ կոչ եմ անում հանգստություն պահպանել, մեկդ մյուսին լսել, դրանից հետո Փամբակ համայնքի ավագանին կազմված արձանագրության հիման վրա կտա իր դիրքորոշումը: Տեղեկացնում եմ, որ «Զով-Գուժ» ՍՊԸ-ն Փամբակ խոշորացված համայնքի Քարաբերդ բնակավայրի վարչական տարածքում ցանկանում է իրականացնել Քարաբերդի ոսկու հանքավայրի արևմտյան և արևելյան հատվածների օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Հիմա առաջինը խոսքը կտանք ընկերության ներկայացուցիչներին, դրանից հետո խոսքը կտանք և՛ բնապահպաններին, և՛ բնակիչներին:

Համայնքի ղեկավարի խոսքին արձագանքեց Օլեգ Դուլգարյանը, հարցնելով, թէ ինչու է այս տարի արդեն 3-րդ անգամ նույն հարցի համար լսում անցկացվում, եթե նախկին լսումները կամ չեն կայացել, կամ բնակիչների մեծ մասը դեմ են եղել, ինչու՞ է տեղական ժողովրդավարությունը ոտնահարվում: Համայնքի բնակիչներից ոմանք

արձագանքեցին, որ իրենք չեն մասնակցել, հիմա ուզում են լսել, ոմանք էլ ասեցին, որ իրենք այն ժամանակ էլ են կողմ արտահայտվել, հիմա էլ:

Համայնքի ղեկավարը պատասխանեց.

- Լսումներն անց են կացվել նախ տարբեր տեղամասերի համար և տարբեր ընկերությունների կողմից, հիմա էլ անց են կացվում օրենքի ուժով, նախաձեռնող կողմի գրավոր դիմումի համաձայն, այնպես որ խոսքը տրամադրում եմ ընկերության ներկայացուցիչներին:

«Զով-Գուժ» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Հակոբյանը նկերկայացրեց ընկերության ներկայացուցիչ Վիգեն Ավետիսյանին, ով պետք է ներկայացներ նախատեսվող գործողությունը:

«Զով-Գուժ» ընկերության աշխատակիցներին ընդհատեց բնապահպան Անի Խաչատրյանը: Նա նշում էր, որ ոչ մի հանքարդյունահանող ընկերություն չի կարող հիմնավոր պատասխաններ տալ ռիսկերի վերաբերյալ: Պնդում էր, որ մարդիկ այդքան էլ տեղեկացված չեն հանքարդյունաբերության խնդիրներից, իսկ հանքարդյունահանողները «հեքիաթներ պատմելով, մարդկանց ուղեղները լվանալով, համոզելով» գալիս են իրենց գրպանները լցնելու:

Համայնքի բնակիչներից ոմանք միջամտեցին, որ հերթով խոսեն, թույլ տան ընկերության ներկայացուցիչներին ներկայացնել իրենց կողմից նախատեսվող աշխատանքները, որի արդյունքում բանավեճ սկսվեց: Իրավիճակը հարթեց համայնքի ղեկավարը՝ հորդորելով առանց խոսքի իրավունքի չմիջամտել, թույլ տալ «Զով-Գուժ» ընկերության ներկայացուցչին ներկայացնելու նախատեսվող գործողությունը, որից հետո բոլորին կտրամադրվի արտահայտվելու հնարավորություն:

Վիգեն Ավետիսյանը շարունակեց.

- Ներկայացնեմ, որ նախատեսվող գործողության նպատակը Քարաբերդի ոսկու հանքավայրի արևմտյան և արևելյան տեղամասերում, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն անց կացնելն է: Գործողությունը համապատասխանում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի ա. ենթակետին: ՈՒսումնասիրվող շրջանն ունի բլոկային կառուցվածք, գտնվում է առաջին կարգի տեկ-տոնական բլոկների՝ Փամբակի գրաբեն իջվածքի Բազումի հորստ-բարձրացման հանգույցում: Աշխատանքների ակնկալվող արդյունքներն են՝ իրականացնել տեղամասի պաշարների վերագնահատում:

Բնապահպանական միջոցառումներից նախատեսվում է փոշեառաջացման կրճատում և վերահսկում՝ հորատման լուծույթների կիրառման, հորատման հարթակների ջրցանման, ռեկուլտիվացիայի՝ եղանակով, հողերի պահպանություն, շրջանի կենսաբազմազանության պահպանություն և այլն:

Պ-ն Ավետիսյանի խոսքը անընդհատ ընդհատում էին լսմանը մասնակցող բնապահպանները՝ հնչեցնելով տարբեր ռեպլիկաներ: Սկսվեց բանավեճ, որի ժամանակ բնակիչներից շատերը հակադարձեցին բնապահպաններին, որ իրենք կողմ են նախատեսվող գործողությանը, որի մասին գրավոր կդիմեն համայնքի ղեկավարին:

Խոսքը տրվեց Քարաբերդի բնակիչ Վաչագան Թունյանին.

- Հարգելի Քարաբերդցիներ, մենք ապրում ենք լքված գյուղում, տևական ժամանակ Չեխերը մեր գյուղում ինտեգրված աշխատել են, մենք էլ բավարարվել ենք: Հետագայում

ընդլայնվելուն, ես որպես Քարաբերդի բնակիչ, դեմ եմ: Եղածը թող շահագործվի, համայնքի բյուջեին էլ փող հատկացնելու դեպքում առաջնայնությունը պետք է տրվի մեր լքված գյուղին:

Խոսքի իրավունքը տրվեց Աշոտ Ալոյանին, ով իր խոսքում պնդում էր, որ եթե ՀՀ-ում գործում են հանքեր, տարբերություն չպիտի դրվի, եթե գործում ա էս մեկը, թող մյուսն էլ գործի: Նա կողմ արտահայտվեց և նշեց, որ արդյունքում էլ կբացվեն աշխատատեղեր:

Խոսքը տրվեց բնակիչ Նարեկին.

- Մեկ ժամ հետո բոլորդ տուն եք գնալու, գյուղի բնակիչներն են մնալու, մի 20 տարի էլ սենց մնա՞նք, գյուղը չզարգանա՞, աշխատատեղեր չլինե՞ն: Ես կողմ եմ, տալիս եմ իմ համաձայնությունը:

Ցանկացած կողմ արտահայտվող բնակչի և բնապահպանների միջև բռնկվում էր բանավեճ, որը հարթվում էր համայնքի ղեկավարի կողմից:

Ելույթ ունեցավ բնակիչ Անդրանիկ Նալբանդյանը: Նա ասաց, որ ցանկանում է հնարավորություն տալ հանքը ուսումնասիրել ճիշտ ձևով, նորմերին համապատասխան, իրենք էլ հսկելու են, որ ամեն ինչ ճիշտ կատարվի, վնաս չտրվի: Նա նշեց, որ ինքը Քարաբերդում ծնված, ապրած, մեծացած մարդ է, բնությունը թանկ է իր համար, բայց ցանկանում է տալ հնարավորություն մարդկանց, որ ուսումնասիրեն, հասկանալու համար՝ թէ ինչ ունեն, նաև կողմ է աշխատատեղեր բացվելուն:

Ելույթ ունեցավ բնակիչ Արմեն Շավելյանը.

- Ժողովուրդ ջան, ես շատ ուրախ եմ, որ մեր բնապահպանները բնակիչների համար մտածում են, դա հարգելի ա, բայց էսպիսի հարց կա: Որտեղ մի հատ բաց հանք կա, դա նորմալ ա, փակ հանք են ուզում շահագործեն՝ դա նորմալ չի: Այսինքն ինչ, տարբերություն եք դնու՞մ դուք, կարող ա՞ էդ բաց հանքի կողմից եք դուք: Էլի եմ ասում, դուք լավ բան եք անում, բայց գյուղը ապրել ա չէ՞ ու պիտի ապրի չէ՞, մարդիկ եկել են կոնկրետ ծրագրով, աշխատատեղեր կբացվի: Էկոլոգիական տեսակետից ամբողջ աշխարհում ինչքան հանքեր կան, ամենաապահով էկոլոգիական հանքը դա փակ թունելային հանքն ա: Ես զգում եմ, որ ձեր մեջ կա խոր անհանգստություն հանքարդյունաբերության վտանգների առումով, բայց էդ անհանգստությունը ֆիքսվել ա հենց այս գյուղի, էս մի տարբերակի վրա, չի կարելի:

Ելույթ ունեցավ բնակիչ Լևոն Ալոյանը.

- Ժղովուրդ ջան բոլորս էլ Հայաստանից ենք, Հայաստանի բնակիչ, մենք բոլորս ուզում ենք մեր Հայաստանը զարգանա: Իմ մտահոգությունը սա է, որ ասում են հանքերը չօգտագործեն, պաշարները չարտահանեն, չվաճառեն, բա ինչով ենք ուզում աշխատավարձը բարձրանա, լավ ապրենք: Ես ասում եմ, եթե բաց հանքերը կա ու թույլ են տալիս աշխատեն, էս մարդիկ էլ ուզում են թունելային շահագործեն: Ես կողմ եմ, թող գործեն:

Խոսքը տրվեց բնապահպան Անի Խաչատրյանին: Նա իր խոսքում նշեց, որ 2012թ-ից բնապահպանական թեմաների մեջ է, կամավոր բնապահպան է, ոչ մի կազմակերպության մեջ ընդգրկված չի եղել: Նա հավատացնում էր, որ չկա հանք, որ չի աղտոտում, նույնիսկ փակ հանքերը, ստանդարտները մեկ ա, ոչ մի տեղ չեն պահպանվում, Հայաստանում ոչ մի հանք չի շահագործվում իրենց խոստացած «լոլոների» համապատասխան: Նա նշեց, որ հասկանում է, գյուղը դատարկվում է, ապրելու լիքը միջոցներ չունի գյուղացին, բայց մի քիչ ավելի երկարաժամկետ նպատակների դեպքում՝

օրինակ գյուղատնտեսության, տուրիզմի զարգացման պարագայում, բնակիչները չեն կանգնի «կոտրված տաշտակի առաջ»:

Խոսքը տրվեց «ՈՒղղակի ժողովրդավարություն» ՀԿ-ի նախագահ Գևորգ Քոթանջյանին:

- Պարոն Կոստանդյան երկու հատ հարց ունեմ: Ինձ հետաքրքիր ա փաստացի քանի՞ բնակիչ ունի գյուղը, որ էսքան մարդ հանդես եկավ որպես գյուղի բնակիչ և երկրորդը՝ նախատեսվող հանքի տարածքում քանի՞ սողանքային գոտի կա:

Պատասխանեց Սուրեն Կոստանդյանը.

- Քարաբերդում փաստացի ունենք 83 բնակիչ, հաշվառված՝ 62: Ես իմ բնակիչներին, բոլորին ճանաչում եմ դեմքով: Երկրորդ՝ տվյալ տարածքում սողանքային գոտիների մասին հարցին կպատասխանի նախաձեռնող կողմը, եթե ունի տվյալներ:

Պատասխանեց «Զով-Գուժ» ընկերության ներկայացուցիչ Վիգեն Ավետիսյանը:

- Կոնկրետ այդ տեղամասում չկա:

Գ. Քոթանջյանի, ի՞սկ հարակից տարածքներում, հարցադրմանը Վ. Ավետիսյանը պատասխանեց հարցով.

- Ինչքա՞ն հարակից: Նայեք երբ որ արդեն ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կներկայացվի, այնտեղ արդեն առկայության դեպքում ներառված կլինի նաև այդ տվյալները, կոնկրետ թէ քանի մետր կամ կմ հեռավորության վրա է գտնվում սողանքային գոտին, եթե առկա է: Ավելին ասեմ, քանի որ այդ հարցերը տվեցիք, պարոն համայնքապետը եթե թույլ կտա շարունակեմ, ինչպես նաև տեղեկացնեմ բնակչությանը: Նախորդ անգամ ներկայացվեց, որ տվյալ տարածքում ուրան կա և որպես ապացույց ներկայացվեց քարտեզի ձևով: Ես դրա հետ կապված ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական էջում տեղադրված հաշվետվություններից, որը ի դեպ բաց է և հասանելի բոլորին, հանել եմ տվյալներ: Հաշվետվության մեջ ասվում է, որ տվյալ տարածքում ուրան չկա:

Իրավապաշտպան Օլեգ Դոլգարյանը հակադարձեց.

- նախարարությունում չկա, որովհետև ուսումնասիրված չի, պրոֆեսոր Ալոյանը ասում է, որ ուրանակիր տարածք կա, բայց պաշարները գնահատելու համար թէ որտե՞ղ ա, ինչքա՞ն ա, չկա ուսումնասիրություն:

- Բա ինչու՞ էիք սուտ ասում անցած անգամ, որ կա տվյալ տարածքում,- շարունակեց Վիգեն Ավետիսյանը:

Խոսք խնդրեց Վանաձորի բնակչուհի Նաիրան.

- Անունս Նաիրա է, Վանաձորից եմ, Քարաբերդի հետ ոչ մի կապ չունեմ: Ես ուղղակի հայ եմ, որևէ կազմակերպություն չեմ ներկայացնում: Հարգելի քարաբերդցիներ ջան, էս տարածքը այնքան պոտենցիալ ունի տուրիզմի, գյուղատնտեսության, մեղվապահության զարգացման համար, որ էս կարճաժամկետ հանքերը ձեզ պետք չի: Եթե գա մի կազմակերպություն և ձեզ առաջարկի երկարաժամկետ կենսացիկլ ունեցող որևէ բիզնես պրոյեկտ գյուղատնտեսական կամ տուրիստական, դրանից կշահեք բոլորդ: Հանքի շահագործումից, բացի հիվանդությունները ու մի քանի ամսվա աշխատավարձը, ուրիշ բան չեք շահի:

Ելույթ ունեցավ Քարաբերդի բնակիչ Գագիկ Շավելյանը.

- Մեր վնասակար հանքը էս շեբինի հանքն ա, էս հանքը թունելային է լինելու, ոչ մի բան էլ չկա, թող աշխատի: Մեր երեխաներից էլ կաշխատեն այդտեղ, ժողովուրդը կաշխատի, մի քանի ընտանիք կապրի, ես կողմ եմ: Մեր վնասակար հանքը քարի հանքն ա, եթե փակում են, կա՛մ ընդհանուր փակեն, կա՛մ թողեն, որը քիչ վնասակար ա, նա աշխատի:

Լսեցին Քարաբերդի բնակիչ Սերժիկ Յարիբեկյանին: Նա նշեց, որ երկրորդ հանքը բացվի, աղբը ու՞ր են տանելու, մեկա էլի աղտոտվելու է: Նշեց, որ կողմ է ունեցածով բավարավելուն, արդեն առկա հանքը թող աշխատի, եթե ներդրում են կատարել գյուղի համար, ժողովուրդը գնահատում է, ուրախ է: Շենք են սարքել, ճանապարհ նորոգել, լուսավորություն անցկացրել: Բայց թող գործեն ունեցած տարածքներում, նոր հանքին կողմ չէ, առկա հանքի համար էլ ընդլայնում չի ցանկանում, նույնիսկ մեկ մետր:

Ելույթ ունեցավ Ռոբերտ Շավեյյանը.

- Քանի՞ հատ հանք կա, դե թող փակեն, եթե չեն փակում, նրանք աշխատում են, թող սա էլ աշխատի: Մենք համաձայն ենք, որ մարդիկ աշխատեն: Բաց հանքերին թողում են աշխատեն, սա փակ ա, չեն թողնում՞: Ես կողմ եմ արտահայտվում:

Ելույթ ունեցավ Հայկ Աբրահամյանը.

- Ժողովուրդ ջան ես ուզում եմ մի կարևոր բան ասեմ: Էստեղ շատ կեղծ երկընտրանքի առջև են կանգնեցնում բնակիչներին: Ասում են կամ հանքն ա, կամ պիտի աղքատ մեռնես: Չի լինում այդպիսի բան ժողովուրդ ջան, որովհետև երկընտրանքը այդպիսին չէ: Հավատացեք այն նառատիվը, որ ներկայացվում է, թող բացվի, որ աշխատատեղեր բացվեն, մարդիկ լավ ապրեն, դա կեղծ է: Ժողովուրդ ջան ընտրությունը դրա մեջ չի, ընտրությունը նրա մեջ է, որ արդյոք ուզում եք ապրել մաքուր բնության մեջ, առողջ և արժանապատիվ:

Խոսքով հանդես եկավ համայնքի ղեկավար Ս. Կոստանդյանը.

- Հարգելի բնակիչներ, բոլորիդ կարծիքը իմ համար կարևոր է, ես արդեն երեք տարի է ղեկավարում եմ Փամբակ խոշորացված համայնքը ու ցանկացած բնակչի կարող եք հարցնել, թե ինչպես եմ իրենց վերաբերվում և իրենց կարծիքը ինձ համար ինչքան կարևոր է:

Բացի դա, մենք խոշորացված համայնքում ունենք և՛ բնապահպանական, և՛ հանքարդյունաբերության, և՛ գյուղատնտեսության գոտիներ: Հավատացնում եմ, որ մեր թիմը ամեն ինչ անում է բոլոր ուղղությունները ինչքան հնարավոր է զարգացնելու ուղղությամբ: Ես լսեցի բոլորիդ կարծիքները և՛ ներսում, և՛ դրսում, դրանց հիման վրա կկազմվի արձանագրություն, որը առաջիկայում կներկայացվի ավագանու քննարկմանը: Այստեղ ներկա են նաև ավագանու անդամներ, ովքեր լսեցին բոլորիդ դիրքորոշումները: Այսպիսով հանրային լսումները համարում եմ ավարտված:

Համայնքի ղեկավարը ևս մեկ անգամ նշեց, որ հանրային լսումը կազմակերպվել է օրենքի շրջանակներում:

Հանրային լսման վարող,

Փամբակ համայնքի ղեկավար Ս. Կոստանդյան

Քարաբերդ գյուղի վարչական ղեկավար՝ Յու. Շավելյան

«Զով-Գուժ» ընկերության տնօրեն՝ Հ. Հակոբյան

«Զով-Գուժ» ընկերության ներկայացուցիչ՝ Վ. Ավետիսյան